ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2017 թվականի N2-Ն

2017ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Սահմանել Սևան համայնքի վարչական տարածքում 2017թ. համար տեղական տուրքերը և դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սահմանել համայնքի 2017թ. համար տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու՝ 26.12.2016թ. թիվ 8-Ն որոշումը:
4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ ՝ հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Կողմ 10 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԽԱԼԱՓՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
8. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
10. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված 1

Սևան համայնքի ավագանու՝
20.01.2017թ թիվ 2-Ն որոշման

Տեղական տուրքերի տեսակները և դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շենք, շինությունների համար

- մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 4500 դրամ.

բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

- 200-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 9000 դրամ.
- 500-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.
- 1000-ից մինչև 3000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.
- 3000-ից և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ.

գ) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

- մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 900 դրամ.
- 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 900 դրամ.

բ. բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1500 դրամ:
4) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 դրամ,
5) միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարների կողերում գտնվող օբյեկտների համար՝ 200000 դրամ
6) խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 20000 դրամ.
8) Համայնքի տարածքում թանկարժեք մետաղների պատրաստված իրերի մանրածախ առևտրի առքուվաճառքի համար նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50000 դրամ:
9) Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ.
- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ.
- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ.
- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ.
- 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.
բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ.
- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12000 դրամ.
- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15000 դրամ.
- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22000 դրամ.
- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30000 դրամ.
- 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50000 դրամ.
10) Համայնքի տարածքում՝ իրավաբանական անձանց, ԱՁ-ին «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված.

- բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քմ-ի համար.

11) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50000 դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ 200000 դրամ.

դ. խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ.

ե. շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ.

զ. վիճակախաղերի կազմակերպման համար 100000 դրամ:

12) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա) հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ.
- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.
- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ.
- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 17000 դրամ.
- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 22000 դրամ.
- 501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 40000 դրամ.

բ) Ոչ հիմնական շինության ներսում

- մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտների համար 1000 դրամ
- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ.
- 50-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ.
- 100-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 դրամ.
- 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 9000 դրամ.
- 500 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20000 դրամ:

13) Տնային կենդանիներ պահելու թույլտվության համար օրացուցային տարվա համար 5000 դրամ:

14) Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ-ի տեղական տուրքը սահմանվում է՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար 3500 դրամ.

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.
դ. սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ:
ե. դատարկ գովազդային վահանակների մեկ քմ-ի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25%-ի չափով:
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քմ-ի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան:

15) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 100000 դրամ:

16) Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ յուրաքանչյուր մեքենայի հաշվով:

Հավելված 2

Սևան համայնքի ավագանու՝

20.01.2017թ թիվ 2-Ն որոշման

Տեղական վճարը	Դրույքաչափը / ՀՀ դրամ /
Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու, հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար	10000
ՏԻՄ կողմից մրցույթներ և աճուրդների հետ կապված մասնակիցների վճար	3000
Համայնքի արխիվից փաստաթղթերի լուսապատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է	1000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
ք.Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-63-44, sevanhamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունվարի 2017 թվականի N3-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետով և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» 32-րդ հոդվածի 5-րդ կետի, «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության՝ 01.09.2005թ. N 1428-Ն որոշման, ինչպես նաև ՀՀ Կրթության և գիտության նախարարի՝ 26.01.2007թ. N 29-Ն և 21.07.2010թ. N 754-Ն հրամանների պահանջները՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և հաստատել համայնքի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2017թվականի հաստիքացուցակները, աշխատողների թվաքանակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1, 2, 3 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ 2017թ. հունվարի 1-ից:

Կողմ 10 դեմ 0 ձեռնպահ 0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
5. ԽԱԼԱՓՅԱՆ ՆՈՐԻԿ
6. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՄԿՐՏԻՉ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
8. ՆԱԴԱՐՅԱՆ ԱՇՈՏ
9. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
10. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված 1

Սևան համայնքի ավագանու՝

20.01.2017թ. թիվ 3-Ա որոշման

Կազմակերպության անվանումը	2016թ. դրույքների չափաքանակը	2017թ. դրույքների չափաքանակը	Տարբերությունը
Վ. Ստեփանյանի Գրադարաների կենտրոնացված համակարգ	13.5	10.25	3.25
Ս. Զաքարյանի անվան համայնքային մշակութային կենտրոն	15	11	4
թիվ 1 «Բողբոջ» մ/մ	28.5	24.98	3.52
թիվ 2 «Զարթոնք» մ/մ	21	20.48	0.52
թիվ 3 «Հեքիաթ» մ	33	31.72	1.28
թիվ 4 «Գալիք» մ/մ	29.85	26.6	3.25
Գագարինի մ/մ	13.75	11.75	2
Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց	30	28.5	1.5
Սևանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց	34.6	31.6	3
Հովի. Այվազովսկու անվան արվեստի դպրոց	25.75	21	4.75
«Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում»	50	49.5	0.5
Ընդամենը	294.95	267.38	27.57

Հավելված 2

Սևան համայնքի ավագանու՝

20.01.2017թ. թիվ 3-Ա որոշման

Կազմակերպության անվանումը	2016թ. աշխատակիցների թվաքանակը	2017թ. աշխատակիցների թվաքանակը	Տարբերությունը
Վ. Ստեփանյանի Գրադարանների կենտրոնացված համակարգ	14	14	
Ս. Զաքարյանի անվան համայնքային մշակութային կենտրոն	15	15	
թիվ 1 «Բողբոջ» մ/մ	31	31	
թիվ 2 «Զարթոնք» մ/մ	21	21	
թիվ 3 «Հեքիաթ» մ	33	33	
թիվ 4 «Գալիք» մ/մ	33	31	
Գագարինի մ/մ	17	18	
Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց	33	31	
Սևանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց	31	31	
Հովի. Այվազովսկու անվան արվեստի դպրոց	27	26	
«Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում»	51	50	
Ընդամենը	305	301	4

Հավելված 3

Սևան համայնքի ավագանու՝

20.01.2017թ. թիվ 3-Ա որոշման

Կազմակերպության անվանումը	2017թ. դրույքների չափաքանակը	2017թ. աշխատակիցների թվաքանակը
Վ. Ստեփանյանի Գրադարանների կենտրոնացված համակարգ	10.25	14
Ս. Զաքարյանի անվան համայնքային մշակութային կենտրոն	11	15
թիվ 1 «Բողբոջ» մ/մ	24.98	31
թիվ 2 «Զարթոնք» մ/մ	20.48	21
թիվ 3 «Հեքիաթ» մ	31.72	33
թիվ 4 «Գալիք» մ/մ	26.6	31
Գագարինի մ/մ	11.75	18
Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց	28.5	31
Սևանի Վ. Սարգսյանի անվան երաժշտական դպրոց	31.6	31
Հովի. Այվազովսկու անվան արվեստի դպրոց	21	26
«Սևան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում»	49.5	50
Ընդամենը	267.38	301